



Լոնդոնում ՀՀ դեսպանությունը շնորհավորում է է բոլորին Հայաստանի Հանրապետության անկախության 12-րդ տարեդարձի առթիվ:

**Հայաստան**

**ՆԱՆԱԳԱՀ ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՆՈՒՅԹԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱՆ 12-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԾԻ ԱՌԹԻՎ**

«Հայաստանի ժողովուրդը 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կատարեց իր պատմական ընտրությունը. կառուցել անկախ, ժողովրդավարական պետություն:

Այդ պետությունն այսօր բնորոշվում է կայացած պետական կառույցներով, կազմակերպված բանակով և ազատական տնտեսությամբ:

Չնայած մեզ բաժին ընկած ծանր փորձություններին՝ մենք շարունակում ենք հավատարիմ մնալ որդեգրած ազգային ու համամարդկային արժեքներին: Հայաստանի ժողովուրդը գիտակցում է, որ թանկ գին է վճարել իր ազատության համար: Այդ ազատությունը մեր հասարակության արժեքային համակարգի հիմքն է և սակարկման ենթակա չէ:

Երեքադաքական կայունությունը մեր երկրի վերելքի պարտադիր պայմանն է: Այս տարին առանձնահատուկ էր նախագահական և խորհրդարանական ընտրություններով: Մեր պետությունը կարողացավ բռնել այդ քննությունը: Առաջին անգամ մեր նորագույն պատմության մեջ ձևավորվել է քաղաքական կոալիցիա: Ազդեցիկ քաղաքական ուժերի ջանքերի մեկտեղումը դրական մեծ ազդեցություն է ունենալու երկրի զարգացման վրա:

Մեր ժողովրդի սպասելիքները, հատկապես՝ սոցիալ-տնտեսական ոլորտում, մեծ են և՛ Նախագահից, և՛ խորհրդարանից ու կառավարությունից: Հավատացնում են մեզ, որ մենք անելու ենք առավելագույնը այդ սպասելիքները արդարացնելու համար:

Մեր երկրում իրականացված բարեփոխումների ծավալը և խորքը արդեն տալիս են իրենց դրական արդյունքները: Դրանք ոչ թե առանձին ոլորտներում ձեռք բերված հաջողություններ են, այլ՝ համակարգային առաջընթաց: Տնտեսական աճի երկնիշ թվերը, պետական բյուջեի կանոնավոր կատարումը՝ հետևողական աշխատանքի արդյունք են: Ուրախալի է, որ տարեցտարի ամրանում է մասնավոր հատվածը՝ կազմելով մեր տնտեսության հիմքը: Կրկնակի ուրախալի է փոքր և միջին բիզնեսի ակտիվ զարգացումը:

Աղետի գոտու վերականգնման աշխատանքների ավարտին մնացել են հաշված ամիսներ: Այստեղ մեզ արդեն հուզում են տնտեսական զարգացման խնդիրները: Ավարտական փուլում են «Լինսի» հիմնադրամի միջոցով իրականացվող ծրագրերը: Կառուցվող ճանապարհները, կանուղիներն ու թունելները մեր երկրի համար ունեն ռազմավարական և կենսական նշանակություն:

Այսօր մեր գլխավոր խնդիրներն են՝ կոռուպցիայի դեմ համակարգված պայքարը, մասնավոր ներդրումների խրախուսումը, աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի իրականացումը: Այո, ժողովրդի մի մասը դեռ ապրում է ծանր պայմաններում: Բայց տնտեսական աճի այսպիսի տեմպերը նշանակում են, որ ամեն տարի ավելի ու ավելի շատ քաղաքացիներ կբարելավեն իրենց կենսամակարդակը: Սա օրինաչափ է, և ես հավատում եմ դրան:

Միջազգային ասպարեզում մենք հավատարիմ ենք մեր քաղաքական ուղեգծին: Հայաստանի միջազգային ներգրավվածությունը մեր արտաքին քաղաքական գերակայություններից է:

Տարածաշրջանում Հայաստանը վարում է քաղաքակա- նություն, որ միտված է խաղաղության պահպանմանը: Մեր համոզմունքն է, որ ռեգիոնալ համագործակցությունը շահավետ է Հարավային Կովկասի բոլոր երկրների համար: Ավելին, այն կարող է նպաստել հակամարտությունների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորմանը: Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը կառուցում է իր պետականությունը, և մենք դա համարում ենք նրա օրինական և անօտարելի իրավունքը:

Այսօրվա տոնը նաև աշխարհասփյուռ հայության տոնն է: Հայաստանի Հանրապետությունն այսօր ի գործ է լիարժեքորեն կատարելու համայն հայության հայրենիք լինելու իր առաքելությունը: Մենք այսօր վկան ենք պատմական նոր երևույթի: Մեր գրեթե բոլոր նախաձեռնությունները ձեռք են բերում համահայկական բնույթ և ընդգրկում:

Կրկին շնորհավորում են Անկախության տոնի առթիվ: Այս մեծ տոնի օրը մեր պարտքն է հիշել բոլոր նրանց, ովքեր իրենց կյանքը գոհաբերեցին հայրենիքի ազատության համար: Մեր ժողովուրդը կերտում է իր անմահ հերոսների երազած Հայաստանը՝ ազատ, ապահով և բարգավաճ:

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՎԻ ԵՐԵՎԱՆՈՒՄ**

Երևանում սեպտեմբերի 15-20-ը տեղի է ունեցել «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովը՝ քննարկելու հայագիտության հանգուցային հարցերը և հստակեցնելու դրա զարգացման ուղիները: Համաժողովի պատվիրակությանն ընդունել է Նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Համաժողովին մասնակցելու համար Երևան են ժամանել 25 երկրների առավել քան 80 հայագետներ:

Ողջունելով գիտաժողովը Հայաստանում անցկացնելու գաղափարը, Ռոբերտ Քոչարյանն ասել է, որ հայագիտությանը նվիրված համաժողովը մեկն է այն համահայկական լուրջ նախաձեռնություններից, որ կոչված են ծառայելու Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդմանն ու հայապահպանման կարևոր գործին և պետք է շարունակական լինի: Երկրի ղեկավարը հույս է հայտնել, որ համաժողովը հնարավորություն կտա մեկտեղել ջանքերը և մշակել հայագիտության զարգացման ծրագիր, նշելով, որ պետությունն իր աջակցությունը կբերի այդ ծրագրի իրականացմանը:

Համաժողովի բացման ժամանակ հնչած՝ Նախագահ Քոչարյանի ուղերձում նշվում է, որ « Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ է հրավիրվում մեծ միջազգային ընդգրկում և ներկայացուցչական կազմ ունեցող համաժողով: Օրինաչափ է, որ հա- մաժողովը տեղի է ունենում Երևանում, որը պետք է լինի ոչ միայն անկախ Հայաստանի, այլև հայագիտության մայրաքաղաք»:

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՄԱՀՊԱՍԻԺԸ**

Երևան, սեպտեմբեր 10- ԳՂ Ազգային ժողովը ձայների 92 կողմ 1 դեմ հարաբերակցությամբ վավերացրեց Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի հայի 6-րդ

արձանագրությունը, որով խաղաղ ժամանակ արգելվում է մահապատժի կիրառումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՔԵՐՏ ՔՈՀԱՐՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*Սեպտեմբերի 7-9-ը* Բուլղարիայի նախագահ Գեորգի Պրվանովի հրավերով պաշտոնական այցով Սոֆիա մեկնեց Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին արտաքին գործերի, տրանսպորտի և կապի, առողջապահության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարները, պաշտոնատար այլ անձինք, լրագրողներ: Այցի հիմնական նպատակն էր խթանել միջպետական կապերի զարգացումը, խորացնել համագործակցությունը երկու երկրների միջև, ուրվագծել տնտեսական փոխգործակցության հեռանկարները, ինչպես նաև մտքեր փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ:

Սեպտեմբերի 8-ի առավոտյան նախագահ Ռոբերտ Քոչարյանն առանձնագրույց ունեցավ Բուլղարիայի իր պաշտոնակցի հետ, ապա տեղի ունեցան հայ-բուլղարական ընդլայնված կազմով բանակցություններ: Այնուհետև տեղի ունեցան երկկողմ փաստաթղթերի ստորագրման արարողություն և երկու երկրների ղեկավարների մամուլի ասուլիսը: Նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Գեորգի Պրվանովը ստորագրեցին այցի արդյունքների մասին համատեղ Հռչակագիր: Ստորագրվեցին նաև Հայաստանի և Բուլղարիայի միջև հյուպատոսական կոնվենցիա, առողջապահության բնագավառում միջկառավարական համաձայնագիր, ինչպես նաև երկու երկրների կառավարությունների միջև կրթության և գիտության, մշակույթի բնագավառներում 2003-2006թթ. համագործակցության մասին գործնական ծրագրեր:

Եռօրյա այցի շրջանակում Հայաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ Բուլղարիայի ժողովրդական ժողովի նախագահ Օգնյան Գերջիկովի, վարչապետ Սիմեոն Սաքսկոբուրոզոտսկիի հետ, ծաղկեպսակ դրեց Անհայտ զինվորի հուշարձանին:

Սեպտեմբերի 8-ի երեկոյան Հայաստանի նախագահի և տիկին Քոչարյանի ներկայությամբ, Բուլղարիայում Հայաստանի մշակույթի օրերի շրջանակում, տեղի ունեցավ աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատուրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գալա համերգ:

Սեպտեմբերի 9-ին Նախագահի գլխավորած պատվիրակությունը Սոֆիայից մեկնեց Պլովդիվ: Այստեղ Ռոբերտ Քոչարյանը այցելեց Սուրբ Գևորգ հայկական եկեղեցի, շրջեց հին քաղաքում, հանդիպում ունեցավ բուլղարահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՊՅ ԳԱԳԱԾՆԱԺՈՂՈՎՈՒՄ**

*Յալթա, 18 սեպտեմբերի* - ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած պատվիրակությունը մասնակցեց Յալթայում կայացած ԱՊՀ հերթական գագաթնաժողովին: Պատվիրակության կազմում էին վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը և պաշտոնատար այլ անձինք: Գագաթնաժողովում քննարկվեցին պետությունների միջև համագործակցության ընդլայնման և բազմակողմ

տնտեսական հարաբերությունների զարգացման այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են, մասնավորապես, ազատ առևտուրը, օդային հաղորդակցությունը և այլն:

Նախագահ Քոչարյանն առանձին հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի և Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի հետ:

**ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԱՆՂԱՍ ՊԱԿՍԱՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*(Երևան, 14-16 սեպտ. 2003թ.)*

*Սեպտեմբերի 14-ին* նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրավերով եռօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Լիտվայի Հանրապետության նախագահ Ռոլանդաս Պակսասը: Նրա գլխավորած պատվիրակության կազմում էին Լիտվայի արտաքին գործերի նախարարը, խորհրդարանի անդամներ, պաշտոնատար այլ անձինք, մշակույթի գործիչներ, գործարարներ, լրագրողներ:

Սեպտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի նստավայրում տեղի ունեցավ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Ռոլանդաս Պակսասի առանձնագրույցը, որին հաջորդեցին պաշտոնական պատվիրակությունների ընդլայնված կազմով հանդիպումը և երկկողմ փաստաթղթերի ստորագրման արարողությունը:

Հայաստան այցի օրերին Լիտվայի նախագահը հանդիպումներ ունեցավ Ազգային ժողովի նախագահի և մշտական հանձնաժողովների նախագահների ու խմբակցությունների ղեկավարների, վարչապետի, արտաքին գործերի նախարարի հետ: Ռոլանդաս Պակսասին հյուրընկալեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը: Երևանի պետական համալսարանում Լիտվայի նախագահը հանդիպում ունեցավ պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողների հետ: Ռոլանդաս Պակսասը այցելեց նաև Մեծ եղեռնի հուշահամալիր, եղավ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանում, հուշահամալիրին հարող այգում մասնակցեց ծառատունկին:

**ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՎԸ**

*Երևան, սեպտեմբերի 15.* Հայաստանից և Սփյուռքից ավելի քան 900 գործարարներ էին հավաքվել Երևանում՝ մասնակցելու Հայաստան-Սփյուռք առաջին տնտեսական համաժողովին, քննարկելու Հայաստանի տնտեսությունն աշխուժացնելու, ներդրումները խրախուսելու եղանակներն ու հնարավոր ծրագրեր: Համաժողովը բացել է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը սփյուռքահայ գործարարներին կոչ է արել համատեղել հայրենասիրությունն ու հաջող բիզնեսը: Ըստ սփյուռքահայ գործարար Վահագն Հովնանյանի, «Սփյուռքի կապիտալն այսբերգ է, որից այսօր տեսնում ենք միայն զագաթը»:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱԿ-ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 38-րդ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում ելույթ ունենալով ՄԱԿ-ի ԳԱ 38-րդ նստաշրջանում, ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը նշել է, որ «2003 թվականը Հայաստանի համար լավ տարի էր: Մեր կայուն երկնիչ տնտեսական աճը ԱՊՀ-ում ամենաբարձրն է: Մենք գոհ ենք դրանից, բայց նաև ընդունում ենք մարտահրավերը: Մենք գիտենք, որ տնտեսական աճն իր հետ բերում է սոցիալական անջրպետումը դիմակայելու ավելի մեծ պատասխանատվություն, ինչը կարող է հանգեցնել սոցիալական լարվածության և ներքին անկայունության: Անցումային շրջանի այնպիսի չարիքների, ինչպիսիք են հասարակության բևեռացումը, անջրպետը քաղաքի և գյուղի միջև, բարձրագույն կրթության անհավասար մատչելիությունը հաղթահարելու ամենակարճ ճանապարհը տնտեսական աճի բարձր մակարդակի պահպանումն է»: ՀՀ արտգործնախարարը ներկայացրել է նաև Մերձավոր Արևելքի, Իրաքի, Լեռնային Ղարաբաղի և Հայոց Ցեղասպանության խնդիրների մասին Հայաստանի դիրքորոշումը:

## ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 19-ին Ուելսի Ազգային կուսակցության հրավերով ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանը այցելեց Ուելսի մայրաքաղաք **Քարդիֆ**՝ մասնակցելու համար այդ կուսակցության տարեկան խորհրդաժողովին:

«Սենտ Դեվիդ» սրահում ՀՀ դեսպանին ողջունեց Ուելսի ազգային կուսակցության ներկայացուցիչ Ֆիլ Լուիսը: Այնուհետև դեսպան Գաբրիելյանը հանդիպեց Քարդիֆի «Խաղաղության պալատի» ներկայացուցիչ Ստիվըն Թոմասին, որը հանգամանորեն ներկայացրեց Ուելս-Հայաստան հարաբերությունների վերջին շրջանի պատմությունը: Ստիվըն Թոմասը ընդգծեց, որ հայկական ցեղասպանության ճանաչման գործում աշխատանք է տարվում աջակից պատգամավորների քանակն ավելացնելու ուղղությամբ: Ջրուցակցի խնդրանքով դեսպան Գաբրիելյանը ներկայացրեց Հայաստանի դիրքորոշումը այս հարցում, անդրադարձավ նաև ԼՂ հիմնահարցին և Թուրքիայի հետ Հայաստանի ներկայիս հարաբերություններին:

Այնուհետև ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանը հանդիպեց Ուելսի ազգային կուսակցության նախագահի հետ, շնորհավորեց նրան պաշտոնում ընտրվելու կապակցությամբ, անդրադարձավ երկկողմ ապագա անելիքներին, հատկապես, ցեղասպանության ճանաչման գործընթացում: Դաֆիդ Իուանը նշեց, որ տեղյակ է այս հիմնահարցին եւ խոստացավ շարունակել և խորացնել Ուելս-Հայաստան հարաբերությունները:

\*\*\*

Լոնդոնում ՀՀ դեսպանության հովանավորությամբ ս.թ. *սեպտեմբերի 20-ին* Լոնդոնի Սբ. Եղիշե եկեղեցում տեղի ունեցավ **Հայաստանի Հանրապետության անկախության 12-րդ տարեդարձին նվիրված միջոցառում**: Միջոցառման ժամանակ ներկաների առջև ելույթ ունեցան ՄԹ-ում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վահե Գաբրիելյանը, Գերաշնորհ Տեր Նաթան

Եպիսկոպոս Հովհաննիսյանը, Համայնքային և եկեղեցական խորհրդի նախագահ Արա Փալամուռյանը: Ելույթներին հաջորդեց Հայաստանից ժամանած «Հովեր» երգչախմբի համերգը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Թորդա Աբոթ-Վոթը, բրիտանահայ հայմայնքային կազմակերպությունների և համայնքի ներկայացուցիչները

\*\*\*

Սեպտեմբերի 23-ին Լոնդոնում ՀՀ դեսպանությունը, մի քանի տարվա ընդմիջումից հետո, կազմակերպեց **Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված ընդունելություն**, որին մասնակցեցին Մեծ Բրիտանիայի մի քանի նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներ, Լոնդոնում հավատարմագրված դեսպաններ և այլ դիվանագետներ, Հայաստանում ՄԹ դեսպանը, ՄԹ խորհրդարանի անդամներ, ՄԹ տեղական ինքնակառավարման մի շարք մարմինների ղեկավարներ, գործարարներ, լրատվամիջոցների, միջազգային կազմակերպությունների, բանկերի և հայ համայնքի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

\*\*\*

Սեպտեմբերի 24-ին և 30-ին ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանը այցելեց Բրայթոն և Բորնմոթ քաղաքներ՝ ներկա գտնվելու համապատասխանաբար ՄԹ **Լիբերալ-դեմոկրատական և Լեյբորիստական կուսակցությունների** համագումարներին: Նա կարճատև զրույցներ ունեցավ Լիբերալ-դեմոկրատների առաջնորդ Չարլզ Քենեդիի, կառավարող կուսակցությունից՝ արտաքին գործերի նախարար Ջեք Սթրոյի, Միջազգային զարգացման նախարար բարոնուհի Վալերի Ամոսի, պաշտպանության նախարար Ջեֆ Հունի և այլ պաշտոնյաների հետ: